66. ԱՇԿԸ ԾԱԿ ՄԱՐԹԸ

Ըլալ ա, չիլալ մին մարթ։ Էտ մարթեն իլալ ա մին ախճիգյ, մընգյ էլ մին տղա։ Էտ ախճիգյը նան տղան մըծանում ըն, ուրանց հսակեն հսնում։ Տահանց հարը ըխճկանն էլ ա փսակում, տղեն էլ։ Տահանք տնըվերվում ըն։ Էրկունեն էլ շատ խոխա յա ընում, էրկունն էլ բախտավեր ըն ընում։ Ուրանց գյանքում լավ քեր-ըխպրոթուն ըն անում։ Քերը առանց ախպորը, ախպերն էլ առանց քվորը թքյա չըն տընում պրըններումը։ Մին օր վար մինը մինին տեսնում չար, էտ օրը մթնում չար։

Ղորթ ա տահանք էնչանք սերավ ին, ամմա ախպորը մին քանի խըսյթնեն քվորը տուր չար կյամ։ Տա նա յար, վար ախպերը շատ ուրուշու խոսկավ ընող ար, կանոխ հվատող ար, ըստուծապաշտ ար, համ էլ քըշկերեն հվատում ար։ Տրա հետե էլ քերը միշտ նասյաթ ար տամ ախպորը, վար. — Ա՛յ ախպեր շան, դուղ ա էնչաք մծացալ ըս, ամմա հալա խելքտ հետատ հըսալ չի, տրա դարդան էլ գյանքումտ շատ վախտ ըրածըտ ճուրն ա տանում, ամմագյտ կյետն ա տանըմ, տու էլ շատ կփուշմանես, ամմա ետե կինի, ընցածը էլ կարալ չըս ետ պիրիս։ Տրա հետե, եք քու էտ կանուխ հվատալտ, ըրաղին հվատալտ թարգյ ըրա։

Ախպերը քվորը վրզավ ա օնում, վար. — Լավ ըս ասում, ա քեր, իմ էս կարճ խելքըս էլա տհենց ասում, ամմա անգար անիմ է՞, էտ աթագան, բարադան մնացած խոսյաթնեն, կարում չըմ վիրըցնեմ, յրես էլ ըմ գյուդում, վար էտ հվատալը իմ կլոխըս մին քյալագյ

ա պիրըլական, ամմա վար հվատում չըմ, գյուդում ըմ, թա էն սհաթը արքվըլական ըմ, ասում ըմ վար կանոխ չըմեռնեմ, մին քանի տարե էվել ապրիմ, ասում ըմ ըրզներեն հվատամ, վար կանուխ չի տրաքվիմ։

Էրգյան ըպրելի հույսավ էտ մարթը միշտ հվատում ար ըրազներեն, ուրան գյանքըմ էլ դաստ ար անում կըդարե։ Մին դոնում ըրազի տեսնում ա, վար ուրան քաշկերը դինշոթուն չըն տամ, ըստեղընդեղ սդիրում ըն, վար քյնա էս հինչ օրան տանը պատը քանդի, էն ա մին վրեսկու պուլիգյ կա, եր կալ։ Էտ մարթը քյնամ ա ըրազումը տեսած օրան տանը պատը քանդում, վրեսկու պուլիգյ չի քթենում։ Սաղ օրը չրշարվում ա, օրը մթնցընում, տարած հացը կլխցնում, շորերը ճըրղոտում, քրթնունք թափում, ուրուգյունը նղացած տարտակ քյնամ տոն։ Ամմա ուրան էտ չրշրմունքեն անա տանը վեչ մին պան էլա ասում չար։ Մին քանե օր վեչ մին տեղավ էլա քյնամ չար, ուրթումն ար օտում, վար էլ ըրազու, մրազու հվտլական չի։ Ամմա թազա մին արաղ ար տեսնում, վրդեղ ուրան բիյարուտ ըն անում, թա. — Հի՞նչ անխելք մարթ ըս, մունք քյրեզ վը՞րդեղ ընք նշանց տվալ, տու էլ վը՞ր դեղ ըս քյնացալ քանդալ։ Յրես ասալ ըմ, վար աչի պատը քանդիս, տու քյնացալ ըս ծախինը քանդալ։ Քյնա աչի պատը քանդի, տես վեսկավ լիգյը պուլիգյը տուս ա կյամ, թա չէ։

Էտ մարթը ուրան նախատում ա, ասում ա. — Ա՛ կարկած, խոսքը վար ասեն է՞, միչև վերչը կսկանան, տու լհա ըսկացալ ըս պա՛տ, զո՛ւ ըրալ, քյնացալ, թա վե՞ր պատ ա, թա վե՞ր պտատակ, տրանա խարար չըս իլալ, քյընացալ ըս օրերավ չըրշարվալ, օժտ կուրցըրալ, լանթերըտ ճըղռտալ, տարտակ եկալ տոն, էտ հալա քյրեզ խըրեգյ ա, էլ տու ինիս, տու, հալա մին պանին տակ նան կյլոխը գյիդալու, կյլոխտ քամուն չի տաս։

Էտ մարթը էլհա եր ա կենում շալաքուլան հրվաքում, հղե ինում բիդի օրան տները։ Քյնամ ա համին ընդեղ, վրդեղ մին քանի օր առաչ քնդրքանդի յա ըրալ պատերը։ Էս դոնում էնքան ուրխացած, վար ասես լհա վրեսկուն պուլիգյնեն ճոխտ-ճոխտ ա տուս կյլական, էլ վեչ ալուն ա եշում, վեչ վալուն, կլոխն ա պատեն նի կյամ, վեջան չի՞, ծեռքն ա քարեն նի կյամ, վեջան չի, էնքան, չաշմիշ ըլած, թայդի, պատը քանդում ա, տակը պաց անում, պատեն տակը վար փչանում ա, պատը ղռռալի վեր ա կյամ։ Մին ղեռ քար ընում ա էտ մարթին վրետանը, վրեննը փշրում։ Էտ մարթը մնում ա մըլըլըմիշ կյալիս, կարում չի, թա տեղան տուրուր կյա։ Մին քանի օր սոված, ծարավ մնում ա էտ պատեն տակեն վեր ընգած։ Ուրանց

տնեցեբյ էլ հետան շոռ ըն կյամ, վերչը կյամ ըն էտ պատին տակեն տրան քթանում, տեսնում վրեննը փշրած, ուանդյը ռուշը փոխած, սաասը ծվանդյած։ Տրան իրեսեն խուսելավ, թոհմաթ տալավ, տանում ըն ուրանց տոն։ Վրետանը դարդան մին քանե ամես կարում չի, թա տեղան տուրուր կյա։

Էտ մարթեն վրեննը, վար լվանում ա, էլհա սկսում ա ըստեղ-ընդեղ քյնալը։ Էտ խոյաթը, վերչանք ասում ա բաթմիշ անե, ամմա կարում չի՞։ Ինքյն էլ վեչ մին պանի պկսոթուն չար քաշում, վերերը դանավ ար լիդյը, տոնը հյվանավ ար լիդյը, ամմա էլհա էտ մարթին աշկը ուրան իլաֆավը քուշտանում չար, ասում ար հունց օղրմ ա ինի՞, օրիշ տեղա մին պան պիրի։ Վար վեսկուն անումը ըսկանում ար, վենը-ձեռքը տափան կտրում ար։

Էտ մարթը մին քշեր ըրաղի տեսնում ա, վար մարթիք ասում ըն. — Էս հի՞նչ ծմակումը, էս հինչ ծառեն տակեն էն ա վրեսկե կա, քյնա տուս կալ, պեր լավ ապրե։

Էտ մարթը մին օղում ա քյինա, մին էլ սերտը տամ չի։

Քյնամ ա ուրան քվորը մեծ տղեն նհետ նաղլը անում. — Ա՛ քըվոր տըղա ըրաղի իստի պան ըմ տեսալ, եք քյնանք հանինք։— Հա-լա էտ տըղան հվատում չի, ամմա վրեսկուն վրետը տրան էլ ա տուրուր տամ։

Ուրկոքան եր ըն կենում, հաջաթ-մաշաթ յոր օնում ու քյնում բիդի ծմակը։ Հըղրցեն կեսումը էտ տղեն մետը հի՞նչ ա ընգնըմ, դայուն թողում ա մինակ, ինքյը ետ տանում։

Էտ մարթը մըթկումն ասում ա. «Հաղրը քվորս տղան ետ ա տեռալ, մին յրես կանուխ քյնամ տեսնամ»։

Շատ ա քյնամ, խրեգյ ա քյնամ, քյնամ ա մննում ծմակեն խոր-խոր տեղերը, լոխ ուրուր նման ծառեր, գյուդում չի, թա վեր ծառեն հետի յրն ասալ։

Շատ տես ու տեն խըլըշկոտում ա, ամմա խելքը ճուր չի խմում, տա ասում ա. «Հալբաթ ուրան տեսած ծառրն ըստեղ չի»։

Տա էլհա հրղե յա ընգնըմ, ծմակեն մաշավը, քյնում ա հանում մին խոր ծոր, մտնում ա էտ ծորը վար քյնա, ըրաղումը տեսած ծառը քյթանա։ Մին էլ ա տեսնում էն յալան մին պան բիդի ուրան թուլ ինիլավ կյամ ա։ Տա կլոխ ա ընում, վար տա արչ ա կյամ, օրիշ պան չի ինիլ, սկսում ա ծորավը փախչիլ։

Մընչանք փախչում ա, վար հանում ա ընդեղ, վրդեղ քվորը տղան ետ ա տառալ, վրեննները թուլացած, ծեռքերը բուշացած,

հաՀը կտրած նստում ա ըտեղ, աշկը քըցըմ հըղեն նյեր վար էս ա քվորը տղան կկյա։ Քվորը տղան էլ կյամ չի։

Քշերը յրա յա հսնում, էտ մարթին վննըծեռքը հաՀա թուլ ա, կարում չի տեղան տուրուր կյա, մնամ ա տեղ պըրանված։ Քշերվա էն տաՀանը վախտը, էտ մարթեն ընջուկավը սաս ա ընգյնում։ ՀաՀա տա մին վախում ա, ետնան տեսնալավ, վար մրթասաս ա, մխրե ըրխյնանում ա։ Ինքյն էլ ա սաս-սուս անում։ Էտ մարթիքյը վար կյամ ըն մուտանում, տահանց ծիյանը մնում ըն հղըցումը վրենը կացած, վերքան չըրշարվում ըն էտ մարթիքյը, ծիանքը տեղան տուրուր չըն կյամ։

Տահանք ասում ըն, վար ծին խելունք ապրանք ա, հաՀբաթ մին պան կա, վար քյնում չըն։ Տհանցան մին քանենը, վեր ըն կյամ ծիանցան, ըտեղեքյ շոռ կյամ։ Վերչը քյնամ ըն էտ մարթին քթանըմ։

Տրան փռնում, կպոտում, տուր ու թակ ընելավ պիրում, հաՀա օղըմ ըն, թա սպանին, ասում ըն. — Տու հինչ իլաթ-միլաթ ըս, վար քշերվա էս վախտըս ըստեղ ըս։ ՀաՀբաթ տու փիս մարթ ըս, ըստեղ կյողչ ըս կացալ, վար մրեզ մին ղսրաթ անիս։

Էտ մարթը հինչքան ղանչանք ա անում, վար հվտցնե, վար հղըցու յրա մարթ ա, օղում ա քշերը ըտեղ ընցցնե, էքյսը հղե ինի։ Էտ մարթիքյ տըրան հվատում ըն, սպանում չըն։ Լուսանում ա, էտ մարթիքյ քյնամ ըն ուրանց կործեն, նա էլ մնում ա ըտեղ։

Էքյսը քվորը տղան կյամ ա։ Էտ մարթը գինչացած ա ընում։ Էրկու հոքավ եր ըն կենում, հղե ընգնըմ։ Շատ ըն քյնամ, խրեգյ ըն քյնամ, քյնամ ըն հսնում ծմակեն էն ղալին տրեղը։ Ըսկսում ըն աշկ ածել, թա էն վե՞ր ծառը կինի, վար ըրաղի տեսալ ա։

Տահանց պտահում ա մին ախպուր, ընդրա քշտեն մին մեծ հճարե յա ընում։ Տահանք սկսում ըն հճարեն տակը քանդիլը։ Շատ ըն քանդում, խրեգյ ըն քանդում, քնդելիս փոսան մին չեչուտ քար ա տուս կյամ։ Էտ երկու մարթը մին հանգավ էտ քարը պուկում ըն։ Միչև պուկիլը էտ մարթիքյ էն մթկեն ին, վար քարը պուկեն, տական վրեսկե յա տուս կյլական։ Ամմա վար քարը պուկում ըն, տեսնում ըն քարեն տակը վերթնավ լիգյը։ Էտ վերթները ընգնում ըն էտ մարթկանցը ջանավը, էտ մարթիքյ տուս ըն տառնում, ըսկսում փախչիլը, կողի փախչում ըն, ամմա էտ վըրթներան կարում չըն պրծնին, վերթները տահանց ծառն ա եր հանում։ Քյնամ ըն տահանք շուրուրնեն հանում, թափ տամ, վերթները թիմզցնում, շուրուրնեն կյեանում ըն, թուշ քյընում տոն։

Տանը տահանց մին լավ թուքու-թոհմաթ ըն տամ. — Արա,

ա շան տղեքյ, խե՞ ծեր տներու

՝ վեր չըք տաՀռնում, ծեր կործն անեք, ծեր կործը թողած քյնաՀմ ըք ստեղ-ընդեղ տանշվում, տաՀրտաՀկ, Հինչի-պոմրի ընելավ կյամ։ Ետ վար տուք էք, մին դոՀնըմ էլ իսկի Հինչի-պոմրի ընելավ էլ չըք կյլաՀկան, քյնՀնաՀկան ըք վրեՀնավ, ծեռքավ տաք մին կրակու մեչի։ Խլքնեետ կլխներեետ ժաժ ըրեք, ծեր տներումը վեր տաՀռաք, ծեր կործն ըրեք, ծեր ըլաՀծչլաՀծը բոլ ա ծրեզ։

Էտ մարթը ասըմ ա. — Հա, լաՀվ ըս ասըմ։

Ամմա վար աՀրաՀզ ար տեսնում, շանը էլՀա մղմող ար ընՀում։

Մեհեետ էլ տեսնում ա, վար ուրաՀն թքութՀոՀմաՀթ ըն տամ, վար. — Ա՛ կյիժ մարթ, տու խե՞ ասածն սկանում չը՞ս, քու կլխատ տուս պաՀներ ըս անո՞ւմ, տրա դաՀրդաՀն էլ կործտ աջող չի ընցնում։

Էտ մարթը մնում ա ըրմացած։ Ասում ա. — Էս հի՞նչ ա, քոն իլաՀծ վրխտես տրեսած արաղը կդարըմ ըմ, վեչ մին տեղի չըմ հանում, հաՀլաՀ տրանա ետն էլ իրեսս էսքան թըքըմոր ա կյամ, յրես հո՞ւնց անիմ, վար էլ իրեսրս թըքըմոր չի կյա՞։

Մեհեետ էլ վար արաղ տեսնամ, դաՀստի եր չըմ կընՀնական, մինչև վերչը կընՀնական ըմ, տեսնամ հի՞նչ ա տաՀռնում, նոր ընդրա հետան քյնաՀմ, ըրազեն տեսածը կդարիմ, տեսնամ էս դոՀնումը հի՞նչ ա տեՀոնում։

Մեհեետ էլ էտ մարթը ըրազի տեսնում ա, վար ուրաՀն բիշտի-բիշտի յըն անում, վար. — Ա՛ մարթ, խե՞ քու ըպրելի տոՀռնտ գյուդոՀմ չը՞ս, քյրեզ հինչու ասում ըն, տու է՛ն ըրա, վեչ թաՀ ասածը թողե, քյինաՀ կլխատ տուս պաՀներ ըրա, մունք քյրեզ ըսեցինքյ, վար, էս հինչ ծմակեն, էս հինչ ծառնեն տակեն, էս հինչ տեղը, մին վրեսկու կարաս կա, տու քյնաՀմ ըս էտ նշանց տված տեղը թողում, էն մին ընդյունաՀն քանդրմ, տրա դաՀրդաՀն էլ վրեսկեն տեղը վերթն ա տուս կյամ, ջանավտ ընցնում։

Ետ մարթը ճելլի եր ա կենում, քյընամ քվորը տղեն կոշտը, թա. — Արա՛, պա ասի՞լ չը՞ս, թաՀ մունք սխալ ընք քանղալ, էս քշեր ըրազում ինձ ըսեցեն, վար պիտի էն ծառեն ծախի անգյունը քանդիքյ, վեր վրեսկե տուս կյա, ամմա մունք քյնացալ ընք աչի անգյունը քանղալ, տրա դաՀրդաՀն էլ վրեսկու տեղակ վերթն ա տուս եկալ։

Քվորը տղան ասում ա. — ՔյնաՀ կործիտ, կլխատ ծեռք ը՞ս եր կաՀլալ, թորը քյնամ ըս քյնա, յրես ջան չանիմ բադա տալի, իմ ըլաՀծ-չիլաՀծրս ինձ բոլ ա, փորս չի սոված, վրեՀնս չի պաՀց, հի՞նչ անիմ ըստեղ-ընդեղ չրըչրվիլիս, թաՀ հա՞յ մին տեղ վրեսկու կարաս քթաՀ-

նամ, հա՛յ պուլիգյ քթանամ, յրես կյամ չըմ, տու թորը քյնամ ըս քյընա։

Ամմա էտ մարթը հմոզում ա էտ տղեն, վար. — Ա՛ տնաքանդ, միչև մհենգյի արազը կեսատ ըմ ըլալ սկնալիս, ամմա մհենգյ մինչև վերչն ըմ ըսկտցալ, մհենդյ գուզ ա ընանական, հենց ա իսկի արազ չինի, լհա ասես ըրըկյանի յա, լհա ասես քըշտան ըմ կյա՞մ։ Էս գոնումըն էլ վար սոտ ինի, էլ վեչ յրես, վեչ տու, ինձ նհետ էլ վեչ կիոսիս, վեչ ոարյօր կտաս, վեչ էլ մրթատեղ կրտինիս։

Էն տղան ասում ա. — Ա հանց ա էս գոնումը ղորթ ինի՞, մին քյինամ տեսնամ վար ղորթ ինի, նրա քյալլան թափ ըմ տլական, տարտակ թուլիմ, լոխ յրես յոր օնիմ, վար սոտ ինի, տրան մին լավ ծեռքըս ըմ ուننական, շան նհետ կապիմ։

Էտ մարթ նան տղան եր ըն կենում հացավ քսակնեն լցնում, քսակնեն յոր օնում, վար վրեսկեն ածին մաչը, քյնամ։ Քյնամ ըն, քյնամ, շատ ըն քյնամ, խրեդյ ըն քյնամ, հրսնըմ ըն համին ծմակը, համին ծառեն տակը, մհենդյ էլ սկսում ըն ծառեն ծախի անգյունը քանդում։ Քանդում ըն, քանդում, քյընամ մին սալ քարու տեմ ընում, էտ քարը կարում չըն վեչ կոտրին, վեչ էլ պիցիրցընին։ Էտ մարթը քվորը տղեն ղարկում ա տոն, վար համ հաց պերի, համ էլ գուփուն, ամմա ինքյը մնում ա էտ փոսեն քշտեն նստած։

Էն տղան քյնամ ա տոն, հաց յոր օնում, գուփուն յոր օնում, կյամ, էտ սալ քարը կուտրատում, էն էխշավը վար վրեսկեն քարեն տակեն ա իننական։ Ամմա քարը կտրելանը ետը պարզվում ա, վար մին քարե նավ ա, մաչը վրսկոներավ լիգյը։ Էտ վրսկոներեն ղաթը շոռ ըն կյամ, վեչ վրեսկե յա ինում, վեչ էլ մին պան։ Էտ մարթը նան էտ տղան ուրուր իրեսե խոսում ըն, ուրուր պակաս-պռատ ասում, նղացած հղե ինում տոն։ Ինքյն էլ վեչ մին տեղ ըն քյնամ, վեչ էլ մին հրղրցավ մինը ըռաշկեն ա քյնամ, մինը դրետ։ Վերչը էտ մարթիքյը հանըմ ըն տոն, էլ իրիսատեղ չի ընում, վար տանը խոսեն։

Քվորը տղան ասում ա.— Էլ յրես ինիմ, յրես, էտ մարթին նհետ վրեննը փոխեմ, ջանես կեսը մշվրցրե ըտրա նհետ էնքան տես ու տեն քյնացե, խուտուրու տեղան։

Էտ մարթըն էլհա ուրան մթկումը ասում ա. «Ցրես էլ ըրազու հվալական չը՞մ, գյանքիս կեսը տհենց տեղը փըշրցրե, բոլ ա՞, հերիքյ ա՞, հի՞նչա ա պակա՞ս, վար խուտուրու չըրշարվում ըմ, խուտուրու էտ ծմկներումը տանջվում ըմ»։

Ամմա էտ մարթը էրկու մթկանե յա ինըմ։ Համ տհենց ա ասում, համ թա՞, վար. «Էն վերան տներան վրեսկեն պուլիգյավ տուս կյար,

էն ծառեն տական վրեսկե կարասը տուս կյար, հո՞ւ գյուդում ըս յրես հի՞նչ մարթ կը տեռնի»։ Վրեսկեն վար մետն ար ընգնում, աշկերը չրռում ար, աշկերը չորս անըմ։ Մին խիլլա՜ վախտ էտ մարթը ա՜րաղ չի տեսնում, վենները, ծեռքերը միխրե դինչանում ա, ուրան հալալ կործեն ա կենում։ Համ էլ քնենքյ ար անըմ, վար. —«Էս հենց ա աստված ինձանա խռաված ինի՞, էլ ա՜րաղ չըմ տեսնըմ, չինի թա՜ աստված ինձ մին ղսրաթ անե»։ Մեղա յա կյամ, վար հինչ ա՜րաշ տեսնամ կրդրվլական ա, ա՜րաղը ըստուծու պանն ա, աստված ամեն մարթու ա՜րաղ տեսնալ չի տա՞մ, ա՜րաղը նրա յա տեսնալ տամ, հու վեր ըստուծու հղրցումն ա, հու վեր արթար ա, պա յրես հո՞ւնց տուս կյամ ըստուծու հրղրցան, վար տուս կյամ, աստված ինձ ղսրաթ կանե, պատիժ էլ կտա, ըսկի օր ու պերի չըմ տեսնալ։

Տրանա ետը էտ մարթը քնենքյ ա անում. «Վար մհրնգյ էլ ա՜րաղ տեսնամ մին մարթու էլ ըսլական չըմ։ Բա՜լի լիհա՜ մարթու ասում ըմ, տրա հետե չի վրեսկե տուս կյամ, աստուծու պանն ա լի՞, հո՞ւ վա գյուդում, մեհետ վրեսկեն վերթնը կշինի, մեհետ էլ վեսկեռք կշինի՞»։

Էտ մտածմունքներավը էտ մարթը մնում ա տրկրկլոխ ընելիս. «Պա վեր մինա՜կ քյնա՜մ, յրես հո՞ւնց կանիմ...»

Վերչը կյամ ա էն համոզման, վար. «Աստվա՞ծ-ա՞ստված մրնգյ էլ վար ա՜րաղ տեսնամ տաղ ըրած եր ըմ կննական հղե ինիմ, վեչ մարթու վրմ ըսլական, վեչ էլ մեր տանը»։ Մրնգյ էլ ասում ա. «Ջէ, բա բալաս տեղս գյիդա՜ վեչ՞, վար հետաս կյա, բա՜լքյաս մին պեն ա ջրհում»։

Էտ մարթը վճռում ա, վար մին էլ ա՜րաղ տեսնա, կենղու ուրան կուճուր ըխճկանը ասե, նորու քյինա ըրազումը տեսածեն հետան։

Շատ ա ընցնում, խրեդյ ա ընցնում, էտ մարթը մին ա՜րաղ ա տեսնըմ. վար գուվաքյի մին քերծում, մին քարու տակե, մին փոս կա, վրեսկավ լիգյը։

Էտ մարթը մնում ա մտծելիս, մինա՜կ քյնա՜, թա՜ հնգերավ քյնա՜։ Մինդ էլ սրերտ չի անում, ասում ա հրնգերավ քյինա, վախում ա, թա՜ էլհա փոչ տուս կյա։

Վերչը օգրմ ա մինա՜կ քյնա՜։

Էտ մարթը եր ա կենում մին օրան պրիպասը յոր օնում, քրսակ-մրսակ յոր օնում, վար վրեսկեն ածե մաչը, հշիթնեն շլա՜կում, հղե ինում։ Էտ մարթը քյնա՜մ ա, քյնա՜մ, հսնում չի ըրա՜զումը տեսած տեղը։ Հղցումը հացը կլխում ա, հշթնեն թողում ա հրղեն զրաղեն, ինքյը ետ տա՜ռնում տոն, մինդ էլ էրկու օրվա հաց ա յոր օնում, հղե վնում, քյնա՜մ ա, քյնա՜մ, վերչը հսնում ա ըրա՜զումը տեսած տեղը։

Քյնամ ա շոռ կյամ, շոռ, դե էտ քերծումն էլ հըզեր քար կա, վ ե՞րեն տակը պըտռե, վար քիթենա, վերչը մին քարու տակ քանդում ա, մին հանդավ էն քարը պուկում, տեսնում տակեն վեչ մին պեն էլա, կա վուչ, քոռը-փեշմեն մնամ ա տեղը նստած։ Էնքան ըզարած ա ինում, վար կարում չի թա քյնա տոն։ Սոված ծարավ մնում ա տեղը նստած։ Էքյսը էտ մարթը հղե յա ընում տոն հենց առաչին քշերը, նորու արաղ ա տեսնում, վար էլհա ուրան նախատինք ըն տամ, վար նշանց տված քարեն տակը չի քանդալ, քյնացալ ա քնդելի քարեն տակը թողալ, օրիշ քարու տակ քանդալ։

Ըրազումը նրան ասում ըն. — Վար էն քարը թողալ ըս վրեսկեն տակեն, օրիշ քարու տակ քանդալ, դե մհենդյ քյինա էն քարեն անա տենը մին մեծ քար կա, ընրա տակը քանդի, տրես վրեսկե կա՞, թա վեչ։

Էտ մարթը եր ա կենում իրեք օրվա հաց յոր օնում հշթնեն շլակում, հղե ինում։ Քյնամ ա հսնում համին քերծը, շոռ ա կյամ էն քարը քթանում, վերին տակեն վրեսկե պիտի ինի։ Ուրխանում ա, ասում. «Էս ա վրեսկեն տուս կկյա, քսկնես կլցնիմ շելակըս թմամիմ հղե ինիմ տոն։ Դե ընդրղանը ետը հո՞ւ կկարե, իմ հետաս հըսնե, ըրածըս անե, լավ ա լհա օրիշ մարթու ըսեցե վեչ»։ Էտ մարթը սկսում ա ծանդր ըշխադանքը։

Էտ քարը մեծ քար ա ընում, էտ մարթին աշկը վախում ա տըրանա։ Ասում ա. «Էս հի՞ր բիդի քանդիմ, իշտաս վերչանք վրեսկե կա տակե՞ն»։

Էտ մարթը սկսում ա քարեն չորս անդյունը քանդիլը, ամմա էտ քարն էլ հենց քար ա, վար վեչ ճոնդն ա ըրեվում, վեչ պուճախը։ Քանդում ա, քանդում, կարում չի, թա տակը պեց անե։ Օրը մթնում ա, ինքյն էլ շատ չըշրվելանը ետը, էտ քարեն քշտեն հաց ա օտում, պրծնում, քոն ինում, վար էքյսը եր կենա աշխադանքը շարունակե։ Հեռե տեղա եկա՞ծ, սաղ օրը չըշարված, վստակա՞ծ, էլ կարում չի, լհա քնավ ա ընցնում, հենց պենդ քոն ա ինում, վար ունջուկումը թոփ էլ տրքցնիս, եր չի կենալ։ Էտ մարթը ըրազի տեսնում ա, վար վրեսկեն փոսը պաց ա ըրալ, ամմա էտ փոսը խոր ա, ծեռքըն օղում ա թա մեկնե, հսնում չի։ Մըններեն պտոկնեն էլ վար նի յա հսնում վրեսկուն, վրեսկուն վար նիյա կյամ, ցրտոթունը գյուդում ա, մանները ցրցուրտանում ա, էտ մարթը շատ զոռ ա անում, վար կռանա վրեսկեն հափռե, ամմա ծեռքը նի շար հսնում։ Մխրե էլ էլ զոռ ա անում, վար ծեռքը նի հսնե — բուրդան օղում ա թա կլխեն յրա ինի վերը։

Էտ մարթը լոք ա տամ, եր կենում։ Տու մի ասիլ էտ քերծումը

մին արշ ա ինում ըպրելիս, կյամ ա, պտահում էտ մարթին, ըսկսում թանթուլովը խաղ անելը։ Վերջն էլ սկսում ա թուլուլ տալը։

Հենց էտ վախտը, էտ մարթը ղուրթնանում ա, եր կենում, տեսնում իրեսը չընգռոտած, ըռնփալալ, եր ա կենում, թա փախչի, արշը խոտում ա թուլ ընում, տանում ներքե ծորումը էտ մարթին ծեվծեվ անում։ Օրեր ա ընցնում, էտ մարթը տոն չի կյամ։ Տնացեքյ շոռ կյալավ կյամ ըն հետը քթանում, տեսնում էն վրեսկե օղող մարթը արշու փայ ա տառալ։

— Տհենց ա ինում հա՞, հու վար ուրան իլածավը պավական չի ընում, բավարարվում չի՞, ըշկրծկոթուն ա անո՞ւմ, ըսկի մին տեղ չի հսնում, էտ մարթին նման արշու փայ ա տառնում։

Մարթը հիշքան կարա, աշկը կոշտ կպահե։ Հիշքան ըշկծկոթուն անե, կյլոխը տարտակ կմնա, փորը սոված, մուրաղեն էլ հսնել չի, ամմա էն մարթը, վար ուրան աշխադանքավը ապրե, օրիշի աշխադանքեն յրա չինի աշկը, բախտը տհենց մարթեն վրեննները կփթաթե։ Ամմա աշկը ծակ մարթեն վրեննները, բախտի տեղ, արշը կփթաթե։